Luys Lույս®

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

# ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԻՆԴԵՔՍ

*Հաշվետվություն «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպության կողմից հրապարակված զեկույցի (2019թ.) հիման վրա*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ ..... 1

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 2

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ..... 5

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ ..... 6

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Կոռուպցիան ողջ աշխարհում տնտեսական և սոցիալական զարգացման ամենամեծ խոչընդոտն է: Կոռուպցիայից բխող բացասական երևույթները բազմաթիվ են: Դրանց թվին են դասվում՝ երկրում տնտեսական աճի զսպվածությունը, ժողովրդավարության տանող ճանապարհի մեծ պատնեշները, մարդու իրավունքի իրացման արգելքները, մարդկային և գործարար ներուժի իրացման կանխարգելումը: Գլոբալացման ներկայիս բարձր մակարդակի պայմաններում, այնպիսի արատավոր երևույթի դեմ պայքարը, ինչպիսին է կոռուպցիան, բխում է ոչ միայն առանձին երկրների շահերից, այլև ընդհանուր համաշխարհային տնտեսության հսկայական ցանցի կառուցվածքային միավոր հանդիսացող յուրաքանչյուր երկրի և դրանցում գործող ցանկացած ընկերության շահերից: Այս ամենի հետևանքով կոռուպցիային վերաբերող խնդիրները ազգային մակարդակից անցում են կատարում արդեն համաշխարհային մակարդակ: Համաշխարհային մակարդակում «կոռուպցիա» երևույթը մշտադիտարկվում է մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից: Դրանց շարքում հատկանշական է «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» կազմակերպությունը, որի կողմից հրապարակվում է «Կոռուպցիայի ընկալման ինդեքս» զեկույցը:

«Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» կազմակերպության կողմից «Կոռուպցիայի ընկալման ինդեքս» զեկույցը սկսել է հրապարակվել 1995 թվականից՝ յուրաքանչյուր տարվա փետրվար-մարտ ամիսներին[1], իր մեջ ներառելով աշխարհի գրեթե բոլոր երկրները: Կոռուպցիայի ընկալման ինդեքսը (այսուհետ՝ ԿԸԻ) ցույց է տալիս կոռուպցիայի հարաբերական աստիճանի տարեկան պատկերը՝ դասակարգելով երկրները ըստ իրենց ստացած գնահատականի: 2019-ին ԿԸԻ հրապարակվել է 180 երկրների համար, որոնց թվում է նաև Հայաստանը:

Կոռուպցիայի ընկալման, դրա մակարդակի, մատուցվող հանրային ծառայությունների որակի գնահատման և հասարակական կյանքի այլ դրսևորումների մասին տեղեկությունների կարևոր աղբյուր են ծառայում հանրային կարծիքի հետազոտությունները: Այս ամենից կարելի է կատարել մի եզրակացություն՝ չնայած ***«Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» կազմակերպությունը և դրա կողմից հրապարակվող «Կոռուպցիայի ընկալման ինդեքսը» մեծ համբավ ունի ողջ աշխարհում, այնուամենայնիվ այս զեկույցը չի կարող լինել միջոց երկրում կոռուպցիայի ամբողջական պատկերը հասկանալու համար: Այսպիսի***

[1] ԿԸԻ 2019թ. զեկույցը բացառության կարգով հրապարակվել է 2020-ի հունվարի վերջին:

***<u>եզրահանգման ենք գալիս՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԿԸԻ-ի հաշվարկը չի իրականցվում բոլոր երկրներում կոռուպցիայի հետ կապված խորքային մոնիտորինգի իրականացման արդյունքում: Բացի այդ, ինչպես նշում է «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» կազմակերպությունը, զեկույցը ցույց է տալիս առանձին երկրների կոռուպցիայի մակարդակը միայն պետական սեկտորում և քաղաքական ոլորտում, այն էլ՝ ոչ ամբողջությամբ:</u>***

Ըստ 2019թ. ԿԸԻ տվյալների՝ կոռուպցիայի ամենացածր մակարդակը Նոր Զելանդիայում և Դանիայում է, 3-րդ լավագույն արդյունքը ցուցաբերել է Ֆինլանդիան: Ըստ զեկույցի՝ ամենակոռումպացված երկիրը Սոմալին է, որին հաջորդում է Հարավային Սուդանը, այնուհետև Սիրիան: ՀՀ-ն ԿԸԻ-ով 2019-ին ստացել է 42 միավոր, ինչի արդյունքում զբաղեցնում է 77-րդ հորիզոնականը 180 երկրների շարքում: Այսպիսի ցուցանիշով ՀՀ-ն հարևան երկրներից հետ է մնում միայն Վրաստանից (56 միավոր, 44-րդ հորիզոնական): ԿԸԻ համաշխարհային միջին ցուցանիշը 2019թ. կազմել է 43 միավոր, ինչից հետևում է, որ ՀՀ-ն չի գերազանցել համաշխարհային միջին ցուցանիշի շեմը: Հատկանշական է նաև այն փաստը, որ դասակարգման մեջ ներառված 180 երկրներից ավելի քան երկու երրորդը (այդ թվում՝ Հայաստանը) չի գերազանցել ԿԸԻ 50 միավորը:

## 2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԸԻ 2019թ. տվյալները ձևավորվել են 13 ուսումնասիրությունների և փորձագիտական գնահատումների հիման վրա, որոնք իրականացվում են 12 տարբեր ինստիտուտների կողմից: Ինդեքսի հաշվարկն իրականացնելիս հաշվի են առնվում այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են՝ ժողովրդավարության մակարդակը, քաղաքական և տնտեսական ռիսկերը, երկրի կառավարման արդյունավետությունը, կառավարության կայունության և երկրի սոցիալական-տնտեսական իրավիճակը, բնակչության կենսամակարդակը, բիզնեսի վարման դժվարությունները և այլն: Առանձին երկրների համար նշված ցուցանիշներից ընտրվում են տվյալ երկրի համար արդեն իսկ հաշվարկված ցուցանիշները[2], վերջիններիս ագրեգացման արդյունքում ստացվում է վերջնական ԿԸԻ տարբեր երկրների համար: ԿԸԻ գնահատականը ձևավորվում է 0-ից 100-ի միջակայքում, որտեղ 100-ը համապատասխանում է կոռուպցիայից լիովին ձերբազատված երկրներին, իսկ 0-ն՝ լիովին կոռումպացված

[2] ԿԸԻ զեկույցում ներառվում են միայն այն երկրները, որոնց համար հաշվարկվել է առնվազն երեք ցուցանիշ:

երկրներին: ԿԸԻ գնահատման արդյունքների միջոցով իրականացվում է երկրների դասակարգումը ըստ զբաղեցրած հորիզոնականի:

Հայաստանի 2019թ. ԿԸԻ գնահատման համար «Թրանսփարենսի Ինթերնեյշնլի» կողմից օգտագործվել են թվով 6 ցուցանիշներ, որոնց վերաբերյալ մանրամասները ներկայացվում է ստորև:

**Բերթելսմանի հիմնադրամի 2020թ. «Տրանսֆորմացիա» ինդեքս (BF (TI)[3]:** Ինդեքսը վերլուծում և գնահատում է, թե ինչպես են զարգացող ու անցումային տնտեսությամբ երկրները սոցիալական փոփոխություններ իրականացնում դեպի ժողովրդավարություն և շուկայական տնտեսություն: Այն չափում է երկրների կառավարման որակը, ժողովրդավարության մակարդակը, անցումային գործընթացները և դրանց ազդեցությունները տնտեսության վրա: Այս ինդեքսը հաշվարկվում է 17 գործոնների վերլուծության վրա, որոնք իրենց հերթին բաշխված են երեք խմբերում՝ քաղաքական անցում, տնտեսական անցում և կառավարում[4]:

**Ֆրիդոմ Հաուսի «Անցումային փուլում գտնվող պետություններ» 2018թ. զեկույցը (FH):** Այս զեկույցի հաշվարկն իրականացվում է Կենտրոնական Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի նախկին 29 սոցիալիստական երկրներում: Զեկույցը ցույց է տալիս նշված երկրներում ժողովրդավարության աստիճանը և զարգացման տեսլականները: Այս զեկույցի հաշվարկային հիմք են հանդիսանում 7 հիմնական գործոնները՝ «Ազգային ժողովրդավարական կառավարություն», «Ընտրական գործընթացներ», «Քաղաքացիական հասարակություն», «Անկախ ԶԼՄ-ներ», «Տեղական ժողովրդավարական կառավարություն», «Դատական իշխանության կառուցվածք և անկախություն» և «Կոռուպցիա»[5]:

**Գլոբալ Ինսայթ 2018թ. «Երկրի ռիսկայնության վարկանիշը» (GI):** Երկրի ռիսկայնության վարկանիշը գնահատելիս հաշվարկման հիմք են ընդունվում՝ երկրում քաղաքական և տնտեսական ռիսկերը, օրենքի գերակայությունները, հարկային ռիսկերը, քաղաքական բռնությունները և անվտանգությունը, ինչպես նաև կառավարման արդյունավետությունը[6]:

---

[3] Նկատենք, որ BF (TI) 2020թ. զեկույցը դեռևս չի հրապարակվել, սակայն արդյունքները տրամադրվել են «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» կազմակերպությանը ԿԸԻ-ի հաշվարկման համար:

[4] https://www.bti-project.org/en/about/project/methodology/

[5] https://freedomhouse.org/sites/default/files/FH_NationsInTransit_Web_PDF_FINAL_2018_03_16.pdf

[6] Սկսած 2015 թվականից՝ Գլոբալ Ինսայթը դադարեցրել է տրամադրել իր տվյալները «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» ընկերությանը: 2019թ. ԿԸԻ-ն հաշվարկելու համար Գլոբալ Ինսայթի տվյալները մատչելի են դարձել 2018թ. սեպտեմբերին հրապարակված՝ Համաշխարհային բանկի

**Փոլիթիքլ Ռիսքս Սերվիսիզ Ինթերնեյշնլի «Երկրի միջազգային ռիսկի ուղեցույցի» 2019թ. գնահատականները (PRS):** Իր ստեղծման առաջին իսկ օրվանից (1979թ.), միջազգային այս կազմակերպությունը ամբողջապես կենտրոնացված է քաղաքական ռիսկերի վերլուծությունների վրա: Այս կազմակերպության կողմից ռիսկերի գնահատումն իրականացվում է՝ հիմք ընդունելով կառավարության կայունության և երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի, արտաքին և ներքին կոնֆլիկտների, երկրում կրոնական սահմանափակվածության և ռազմավարական բարձրաստիճան պաշտոնյաների քաղաքականության մեջ ներգրավվածության, ժողովրդավարության խնդիրների մասին և այլ ուսումնասիրություններ[7]:

**Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից 2019թ. իրականացված «Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցման» արդյունքները (WEF):** Համաշխարհային տնտեսական համաժողովը ակտիվ համագործակցության մեջ է մտնում ավելի քան 160 երկրներում գործող ընկերությունների և ինստիտուտների հետ ավելի խորքային վերլուծություններ և ուսումնասիրություններ իրականացնելու համար: Այս հարցումների նպատակն է ձեռք բերել այնպիսի տեղեկատվություն, որի ձեռքբերումը վիճակագրորեն անհնարին կամ շատ դժվար է[8]:

**«Ժողովրդավարության բազմազանություն» ծրագրի 2019թ. արդյունքները (VDEM):** Ծրագրի հիմքում դրված է ժողովրդավարությունը հայեցակարգելու և չափելու նոր մոտեցում: Ծրագրի տվյալների բազայում ցուցիչների մոտ կեսը հիմնված է պաշտոնական աղբյուրներից ստացված նյութերի հիման վրա, ինչպիսիք են տարբեր երկրների Սահմանադրությունները և կառավարության տվյալները: Ծրագիրն առանձնացնում է ժողովրդավարության յոթ ընդհանուր սկզբունք՝ *ընտրական* (ընտրությունների միջոցով հաշվետվողականության հաստատում), *լիբերալ* («մեծամասնության գերիշխանության» բացառում), *մասնակցողականության* (քաղաքացիների ներգրավումը կառավարման գործընթացին), *խորհրդակցականության* (իշխանության և հասարակության միջև երկխոսության հաստատման կարևորությունը), *հավասարության* (հասարակության բոլոր շերտերի

---

կառավարման համաշխարհային ցուցանիշների (World Governance Indicators) միջոցով, որտեղ դիտարկվում են վեց հիմնական ցուցանիշներ՝ լսելիություն և հաշվետվողականություն, քաղաքական կայունություն և բռնության բացակայություն, կառավարման արդյունավետություն, կանոնակարգման որակ, օրենքի գերակայություն և կոռուպցիայի վերահսկողություն: Մանրամասն տե՛ս http://info.worldbank.org/governance/wgi/Home/Documents#wgiDataSources

[7] https://www.prsgroup.com/wp-content/uploads/2018/01/icrgmethodology.pdf
[8] www.weforum.org/gcr

ներգրավվածությունը ժողովրդավարական գործընթացներում), *մեծամասնականության* (հասարակության մեծամասնության իրավունքը քաղաքականության մշակման հարցում), *համերաշխության* (քաղաքական փոքրամասնության և այլ խմբերի իրավունքների պաշտպանությունը)[9]:

## 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

**2019թ. Հայաստանը ԿԸԻ-ով 180 երկրների շարքում 42 միավորով զբաղեցնում է 77-րդ հորիզոնականը: ՀՀ-ն կիսում է իր զբաղեցրած դիրքը Բահրեյնի և Սողոմոնի Կղզիների հետ:** 2018թ. համեմատ 2019-ին ՀՀ ԿԸԻ-ն աճել է 7 միավորով, իսկ դիրքը 2018թ. համեմատ բարելավվել է 28 հորիզոնականով (2018 թ. ՀՀ-ն զբաղեցրել է 105-րդ հորիզոնականը՝ 35 միավորով): Դիրքերի այսպիսի բարելավումը կապված է ինչպես Հայաստանի համեմատ դիտարկվող այլ երկրների ցուցանիշների նվազման, այնպես էլ ՀՀ ԿԸԻ գնահատականի աճի հետ: Սա նոր մեթոդաբանության հաշվարկման առաջին տարուց՝ 2012-ից մինչև 2019-ը ՀՀ գրանցած լավագույն արդյունքն է թե՛ դիրքի առումով և թե՛ ստացած գնահատականի առումով:

**Գծապատկեր 1. ՀՀ ԿԸԻ արժեքները և զբաղեցրած հորիզոնականը**




[9] https://www.v-dem.net/media/filer_public/e6/d2/e6d27595-9d69-4312-b09f-63d2a0a65df2/v-dem_codebook_v9.pdf

ՀՀ ԿԸԻ գրանցած վատագույն արդյունքը եղել է 2016թ., երբ երկիրը 33 միավորով զբաղեցրել է 113-րդ հորիզոնականը: Հատկանշական է այն փաստը, որ ՀՀ ԿԸԻ-ն նվազել է միայն 2015-2016թթ., գնահատականը պահպանվել է 2018թ.՝ 2017-ի համեմատ, իսկ մնացած տարիներին ԿԸԻ-ն արդեն միայն աճել է:

**2019թ. ԿԸԻ աճը 2018-ի համեմատ պայմանավորված է Հայաստանի համար դիտարկվող 6 ցուցանիշներից 4-ի բարելավմամբ: Բարելավված ցուցանիշներն են՝ «Տրանսֆորմացիա» ինդեքսը (2018-ի համեմատ արժեքը բարելավել է 12 միավորով (BF TI), «Երկրի ռիսկայնության վարկանիշը» ծրագիրը (2018-ի համեմատ արժեքը բարելավել է 12 միավորով (GI), «Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցում» ծրագիրը (2018-ի համեմատ արժեքը բարելավել է 9 միավորով (WEF), «Ժողովրդավարության բազմազանություն» ծրագիրը (2018-ի համեմատ արժեքը բարելավել է 11 միավորով (VDEM):**

**Աղյուսակ 1. ՀՀ ԿԸԻ-ի հաշվարկման ցուցանիշները**

| Տարի/Ցուցանիշ | Երկրի դիրքը | ԿԸԻ արժեքը | BF (TI) | FH | GI | PRS | WEF | VDEM |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2016 | 113 | 33 | 28 | 41 | 34 | 32 | 45 | 17 |
| 2017 | 107 | 35 | 33 | 42 | 35 | 32 | 47 | 20 |
| 2018 | 105 | 35 | 33 | 39 | 35 | 32 | 51 | 21 |
| 2019 | 77 | 42 | 45 | 39 | 47 | 32 | 60 | 32 |

**2019թ. ՀՀ ԿԸԻ-ի հաշվարկման ցուցանիշներից 2-ը՝ «Անցումային փուլում գտնվող պետություններ» զեկույցը (FH) և «Երկրի միջազգային ռիսկի ուղեցույց» զեկույցը (PRS) փոփոխություններ չեն կրել 2018-ի համեմատ:**

## 4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ

**2019 թվականին ԿԸԻ 180 երկրների շարքում 87 միավորով առաջին հորիզոնականը կիսում են Դանիան և Նոր Զելանդիան:** ԿԸԻ-ն երկու երկրների համար ձևավորվել է միևնույն 8 ցուցանիշների հիման վրա: Ցուցանիշներից 4-ում նշված երկու երկրները նորից կիսում են վարկանիշային աղյուսակի առաջին հորիզոնականը:

**2019-ին ԿԸԻ վատագույն ցուցանիշ է գրանցել Սոմալին՝ 9 միավորով:** Երկրի ԿԸԻ-ի հաշվարկման համար օգտագործվել է 5 ցուցանիշ, որոնցից 4-ում երկիրը նորից հետնապահի դերում է:

2019-ին ԿԸԻ-ի հաշվարկմանը մասնակից 180 երկրներից 2/3-ից ավելին չեն գերազանցում 50 միավորը: **2019-ին ԿԸԻ աշխարհի միջին ցուցանիշը կազմել է 43 միավոր: ՀՀ-ն, ունենալով 42 միավոր ԿԸԻ, զիջում է 2019թ. միջին ցուցանիշը մեկ միավորով:** Ըստ տարածաշրջանների՝ 2019-ին ԿԸԻ ամենաբարձր ցուցանիշը գրանցել են Արևմտյան Եվրոպա և Եվրոպական Միության տարածաշրջանի երկրները (ԿԸԻ միջին ցուցանիշը՝ 66 միավոր): Հարկ է նշել, որ այս տարածաշրջանի մեջ է մտնում ԿԸԻ առաջատար երկրներից Դանիան, ինչպես նաև հատկանշական է այն հանգամանքը, որ նշված տարածաշրջանի մեջ մտնող երկրներից վատագույն ցուցանիշ գրանցել է Բուլղարիան՝ 43 միավոր:

**Գծապատկեր 2. ՀՀ և այլ տարածաշրջանների ԿԸԻ գնահատականները**




Ըստ տարածաշրջանների՝ 2019-ին ԿԸԻ վատագույն արդյունք է գրանցել Անդրսահարյան Աֆրիկայի տարածաշրջանը, որի միջին ցուցանիշը կազմել է 32 միավոր: Արևելյան Եվրոպա և Կենտրոնական Ասիան (այս տարածաշրջանի մեջ մտնում է նաև Հայաստանը) ըստ տարածաշրջանների՝ ունեն երկրորդ վատագույն միջին արդյունքը՝ 35 միավոր:

## Աղյուսակ 2. ՀՀ և տարածաշրջանի երկրների ԿԸԻ-ի հաշվարկման ցուցանիշները

| Երկիր | Երկրի դիրքը դիտարկվող 180 երկրների շարքում | Երկրի դիրքը Արևելյան Եվրոպա և Կենտրոնական Ասիա տարածաշրջանի շարքում | 2019թ. ԿԸԻ արժեքը |
|---|---|---|---|
| Լիտվա | 35 | 1 | 60 |
| Սլովենիա | 35 | 1 | 60 |
| Լեհաստան | 41 | 3 | 58 |
| Վրաստան | 44 | 4 | 56 |
| Չեխիա | 44 | 4 | 56 |
| Լատվիա | 44 | 4 | 56 |
| Խորվաթիա | 63 | 7 | 47 |
| Չեռնոգորիա | 66 | 8 | 45 |
| Բելառուս | 66 | 8 | 45 |
| Հունգարիա | 70 | 10 | 44 |
| Ռումինիա | 70 | 10 | 44 |
| Բուլղարիա | 74 | 12 | 43 |
| Հայաստան | 77 | 13 | 42 |
| Թուրքիա | 91 | 14 | 39 |
| Սերբիա | 91 | 14 | 39 |
| Բոսնիա և Հերցեգովինա | 101 | 16 | 36 |
| Կոսովո | 101 | 16 | 36 |
| Մակեդոնիա | 106 | 18 | 35 |
| Ալբանիա | 106 | 18 | 35 |
| Ղազախստան | 113 | 20 | 34 |
| Մոլդովա | 120 | 21 | 32 |
| Ուկրաինա | 126 | 22 | 30 |
| Ղրղզստան | 126 | 22 | 30 |
| Ադրբեջան | 126 | 22 | 30 |
| Ռուսաստան | 137 | 25 | 28 |
| Տաջիկստան | 153 | 26 | 25 |
| Ուզբեկստան | 153 | 26 | 25 |
| Թուրքմենստան | 165 | 28 | 19 |

Աղյուսակ 2-ում Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների շարքում Հայաստանը ունի միջին ցուցանիշից բարձր գնահատական, ինչի արդյունքում դիտարկվող 28 երկրների շարքում զբաղեցնում է 13-րդ հորիզոնականը: 2019-ին երկրների քննարկվող խմբում լավագույն ցուցանիշն ունեն Լիտվան և Սլովենիան, որոնց ԿԸԻ-ն կազմել է 60 միավոր, ինչի արդյունքում այդ երկրները արդեն 180 երկրների շարքում զբաղեցնում են 35-րդ հորիզոնականը: Քննարկվող երկրների շարքը եզրափակում է Թուրքմենստանը՝ 19 միավորով և 180 երկրների շարքում արդեն զբաղեցնում 165-րդ հորիզոնականը:

**2019-ին Հայաստանը ԵԱՏՄ անդամ երկրներից ԿԸԻ-ով զիջում է միայն Բելառուսին, որը 66-րդն է 45 միավորով: 2019թ. ԵԱՏՄ անդամ երկրների շարքում ԿԸԻ-ի վատագույն ցուցանիշ է գրանցել Ռուսաստանը՝ 28 միավորով զբաղեցնելով 137-րդ հորիզոնականը: Հատկանշական է այն փաստը, որ մինչ 2015-ը ՀՀ-ն ԿԸԻ-ով գերազանցել է ԵԱՏՄ անդամ բոլոր երկրներին, սակայն 2016-ից ի վեր երկիրը ԿԸԻ-ով սկսել է զիջել Բելառուսին:**

**Գծապատկեր 3. ՀՀ և ԵԱՏՄ մյուս երկրների ԿԸԻ արժեքները 2012-2019թթ.**



**Հայաստանը 2019-ին տարածաշրջանի հարևան երկրներից ԿԸԻ-ով հետ է մնում միայն Վրաստանից, որը 56 միավորով 44-րդն է: Չնայած այն հանգամանքին, որ 2019-ին ԿԸԻ-ով Վրաստանի գնահատականը նվազել է նախորդ տարվա համեմատ, իսկ ՀՀ-ինը՝ աճել, ԿԸԻ-ի այս երկու երկրների ստացած գնահատականների տարբերությունը դեռևս մեծ է և կազմում է 14 միավոր:** ՀՀ-ն ԿԸԻ-ով մինչև 2018-ը զիջել է հարևան երկրներից թե՛ Վրաստանին և թե՛ Թուրքիային:

**Գծապատկեր 4. ՀՀ և հարևան երկրների ԿԸԻ արժեքները 2012-2018թթ.**




**2019-ին Հայաստանը ԿԸԻ-ով առաջ է անցել Թուրքիայից (39 միավոր, 91-րդ հորիզոնական), ինչին նպաստել է Հայաստանի ստացած գնահատականի աճը և Թուրքիայի ստացած գնահատականի նվազումը: ՀՀ-ն դիտարկվող բոլոր տարիներին ավելի բարենպաստ դիրք է ունեցել մեր մյուս երկու հարևանների՝ Ադրբեջանի (30 միավոր, 126-րդ հորիզոնական) և Իրանի (26 միավոր, 146-րդ հորիզոնական) նկատմամբ:**

**Աղյուսակ 3. ՀՀ և հարևան երկրների ցուցանիշների փոփոխությունը 2017-2019թթ.**

| Երկիր | ԿԸԻ | | | ԿԸԻ փոփոխություն | | ԿԸԻ հիման վրա զբաղեցրած հորիզոնականը | | | ԿԸԻ հիման վրա զբաղեցրած հորիզոնականի փոփոխությունը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2017 | 2018 | 2019 | 2017-2018 | 2018-2019 | 2017 | 2018 | 2019 | 2017-2018 | 2018-2019 |
| Վրաստան | 56 | 58 | 56 | ↑ 2 | ↓ -2 | 46 | 41 | 44 | ↑ 5 | ↓ -3 |
| Հայաստան | 35 | 35 | 42 | → 0 | ↑ 7 | 107 | 105 | 77 | ↑ 2 | ↑ 28 |
| Թուրքիա | 40 | 41 | 39 | ↑ 1 | ↓ -2 | 81 | 78 | 91 | ↑ 3 | ↓ -13 |
| Իրան | 30 | 28 | 26 | ↓ -2 | ↓ -2 | 130 | 138 | 146 | ↓ -8 | ↓ -8 |
| Ադրբեջան | 31 | 25 | 30 | ↓ -6 | ↑ 5 | 122 | 152 | 126 | ↓ -30 | ↑ 26 |

Տարածաշրջանի հարևան երկրներից ԿԸԻ գնահատականով 2019-ին 2018-ի համեմատ առաջընթաց են գրանցել Հայաստանը՝ 7 միավորով և Ադրբեջանը՝ 5 միավորով: Իսկ արդեն Թուրքիայի, Իրանի և Վրաստանի ԿԸԻ-ները նվազել են 2-ական միավորով: 2019-ին 2018-ի համեմատ ԿԸԻ-ի հիման վրա ունեցած դիրքի առումով նորից առաջընթաց են գրանցել Հայաստանը՝ 28 հորիզոնականով, և Ադրբեջանը՝ 26 հորիզոնականով: Վրաստանը, Թուրքիան և Իրանը զիջել են իրենց դիրքերը ԿԸԻ-ով կազմված վարկանիշային աղյուսակում՝ համապատասխանաբար 3, 13 և 8 հորիզոնականներով:

*«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:*

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*